ՍԵՊՏԵՄԲԵՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության սեպտեմբեր ամսվա անցուդարձի մասին:

«ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ԾՐԱԳԻՐ

Սեպտեմբերի 5-ին՝ «Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի կայացում» ծրագրի շրջանակում, Գյումրիում մեկնարկեց « Բաց երիտասարդական աշխատանք» խորագրով դասընթացը:
Դասընթացն ուներ բաց երիտասարդական աշխատանքի վերաբերյալ ուսումնական այցի բաղադրիչ, նպատակաուղղված էր երիտասարդական աշխատանքում ներգրավված դերակատարների կարողությունների զարգացմանը:
Մասնակցում էին երիտասարդների հետ աշխատող, երիտասարդության համար ծրագրեր իրականացնող անհատներ, կազմակերպությունների աշխատակիցներ և կամավորներ, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակայության տակ գտնվող կառույցների աշխատակիցներ՝ ՀՀ տարբեր համայնքներից:
Դասընթացավարներն էին Հայաստանում երիտասարդական ոլորտի առաջատար փորձագետներ՝ Աննա Եղոյանն ու Արթուր Նաջարյանը:

Ծրագրի շրջանակում կազմակերպված «Բաց երիտասարդական աշխատանք» խորագրով դասընթացը, որի ընթացքում մասնակիցները ծանոթացան երիտասարդական աշխատանքի պատմությանը, ԵԱ տեսակներին, բաց երիտասարդական աշխատանքի գործիքակազմին, սկզբունքներին ու դրանց կիրառմանը, հաջորդիվ ստացված գիտելիքները գործնականում կիրառեցին՝ ուսումնականայց կատարելով «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն:

Դասընթացի վերջին օրը մասնակիցները հանդիպում ունեցան ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ռոզա Հակոբյանի հետ, հանդիպման ընթացքում ներկայացվեց «Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի կայացում» ծրագրի ընթացքն ու հետագա գործողությունները քննարկվեցին երիտասարդական քաղաքականությանն ու աշխատանքին վերաբերող մի շարք հարցեր, որից հետո պայմանավորվածությունձեռք բերվեց երկուստեք կիսվել հետագա գործողությունների ու ծրագրերի մասին:

Ծրագիրն իրականացվում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ և «ՀԿ կենտրոն» ՔՀԶ ՀԿ-ի ու «Հայ առաջեմ երիտասարդություն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

ՄԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ

ԵՆԿ-ին միացան միանգամից երկու ԵՀԿ ծրագրի կամավոր:
Մելիսա Պերեյրան և Ելենա Քադե Ջանինին Հայաստան են ժամանել Գերմանիայից և մեկ տարի շարունակ Եվրոպական կամավորական աշխատանք են իրականացնելու Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ-ում:
Բարի գալուստ մեր մեծ ու ջերմ ընտանիք!!!

Սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ Եվրոպական Միության «Եվրոպական կամավորական ծառայություն»ծրագրի շրջանակներում Չեխիայից Գյումրի ժամանած Մարտինա Հորնիչկովայի հրաժեշտի ոչ-ֆորմալ հավաքույթը:

Մարտինան մեկ տարի շարունակ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ում ներգրավված է եղել տարաբնույթ աշխատանքներում, կազմակերպել է սեմինարներ երիտասարդական և սոցիալական աշխատանքների վերաբերյալ, զբաղվել է «Ուրբաթօրյա սրճարանի» կազմակերպման աշխատանքներով, ԵՆԿ-ում և Երիտասարդների տանը վարել է անգլերենի ու յոգայի ակումբ,մասնակցել է Երիտասարնդերի միջազգային օրվա կազմակերպչական աշխատանքներին և այլն:

Հավաքույթի ընթացքում ԵԿԾ համակարգող Մարիամ Ղարագյոզյանի կողմից Մարտինային հանձնվեց շնորհակալագիր և YouthPass հավաստագիրը՝ իրականացրած կամավորական աշխատանքի համար:ė

ՀԱՅԱՍՏԱՆ-ԳԵՐՄԱՆԻԱ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Սեպտեմբերի 7-ին Հայաստան-Գերմանիա դպրոցական փոխանակման ծրագրի շրջանակներում փոխըմբռնման հուշագրեր ստորագրվեցին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոց ՊՈԱԿ-ի, Գյումրի «Ֆոտոն» վարժարանի, Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի և Գյումրու թիվ 1 ավագ դպրոց ՊՈԱԿ-ի միջև:

Հուշագրի շրջանակներում վերոհիշյալ ուսումնական հաստատությունների թվով 8 աշակերտ և 4 ուսուցիչ մասնակցեցին ս/թ. սեպտեմբերի 12-23-ը Բեռլինում կայանալիք Հայաստան-Գերմանիա դպրոցական փոխանակման ծրագրին:

Սեպտեմբերի 17-ին Բեռլինում «Հայաստան-Գերմանիա» դպրոցական փոխանակման ծրագրի շրջանակներում հայկական պատվիրակությունը հյուրընկալվել էր Գերմանիայի հայտնի «Կարլ Վոն Լին» հատուկ դպրոց, որտեղ սովորում են հաշմանդամություն ունեցող շուրջ 1200 աշակերտ:

Տասներեք հոգուց կազմված հայկական պատվիրակությունը ծանոթացավ դպրոցի գործունեությանը, կրթական ծրագրին, աշխատանքային մոտեցումներին և գործիքակազմին, ինչպես նաև հնարավորություն ստացավ մասնակցել անվասայլակների ճիշտ օգտագործում թեմայով գործնական վարժանքին:

Ծրագրի նպատակն էր՝ նպաստել Հայաստանի և Գերմանիայի դպրոցների միջև համագործակցության ստեղծմանը, աշակերտների և ուսուցիչների փորձի փոխանակմանը, միջմշակութայինու ներառական կրթությանձևավորմանը:

Ծրագիրն իրականացվում էր Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի (Հայաստան) և «Vorstand Acht e.V.» ՀԿ-ի (Գերմանիա) կողմից՝ Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության աջակցությամբ:

ՄԵՐ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ

Սեպտեմբերի 7-ին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ գրասենյակում տեղի ունեցավ Երիտասարդների միջազգային օրվա միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում ներգրավված կամավորների հետ ոչ ֆորմալ հանդիպում, որի ընթացքում կամավորները կիսվեցին իրենց տպավորություններով և հանդես եկան նոր առաջարկներով:
Հանդիպման վերջում Գյումրու ԵՆԿ ՀԿ-ի կողմից կամավորներին հանձնվեցին շնորհակալագրեր՝ երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջացառումների կազմակերպչական աշխատանքներում ակտիվ մասնակցության և ցուցաբերած աջակցության համար:

Ինչպես նաև ուրախ ենք տեղեկացնել, որ սեպտեմբերի 21-յան միջոցառումների կամավորների համակարգման աշխատանքը վստահվված էր Գյուրմու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ-ին:
ԵՆԿ-ն իր հերթին շնորհակալություն է հայտնում կամավորներից, իրենց անմնացորդ ու արդյունավետ աշխատանքի համար:

Ինչպես նաև ուրախ ենք տեղեկացնել, որ սեպտեմբերի 21-յան միջոցառումների կամավորների համակարգման աշխատանքը վստահվված էր Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիԿենտրոն» ՀԿ-ին:
ԵՆԿ-ն իր հերթին շնորհակալություն է հայտնում կամավորներից, իրենց անմնացորդ ու արդյունավետ աշխատանքի համար:

«UPSHIFT ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՑՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆԴԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Սեպտեմբերի 11-ին Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում տեղի ունեցավ Յունիսեֆի «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման ծրագրի առաջին սերնդի ավարտական միջոցառումը:
Միջոցառումը մեկնարկեց դեռահասների կողմից իրականացրած ֆոտո ցուցահանդեսով, որից հետո համայնքային երիտասարդական ծրագրային գաղափարների մրցույթում հաղթած ու ֆինանսական աջակցություն ստացած 5 թիմերը ներկայացրեցին իրենց վեցամսյա ուսումնական ուղու ընթացքում գրանցած արդյունքները:

Ավարտական միջոցառմանը ներկա էր նաև Շիրակի մարզի մարզպետ Տիգրան Պետրոսյանը, ով կարևորեց դեռահասների մասնակցությունը համայնքային զարգացման գործում և ծրագրին շարունակականություն նորանոր ձեռքբերումներ մաղթեց:

Օրը ամփոփվեց համերգով, որը ամրապնդեց ներկաների ստացած տպավորությունները!
*«UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային» ծրագիրն իրականացնում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Յունիսեֆիհայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

GET A BIKE GET A LIFE

Սեպտեմբերն լի էր բուռն ոգևորվածությամբԵՆԿ ՀԿ-ի «Get a bike, get a life» ՍԶ ծրագրի համար: Գյումրու ԵՆԿ ՀԿ հեծանվասերների ակումբի անդամները կազմակերպության գրասենյակում հյուրընկալեցին Հայաստանի «Սիրողական հեծանվասպորտի և հեծանվային զբոսաշրջության ֆեդերացիայի» ներկայացուցիչներին և երևանցի մի խումբ հեծանվասերների: Փորձի փոխանակման և վարպետաց դասից հետո հանդիպման բոլոր մասնակիցները հեծանվեցին դեպի Մարմաշեն վանական համալիր:
Սեպտեմբերի 22-ին ակումբի 7 անդամ մասնակցեց «Բայքաթոն Երևան» հեծանվային փառատոնին, որից ստացված փորձը նախատեսվում է կիրառել հաջորդ տարի՝ Գյումրիումբայքաթոն կազմակերպելու համար:
Ամիսը եզրափակեցինք դեպի Ջաջուռ ընտրված երթուղով: Արշավի նպատակն էր բացահայտելու Մինաս Ավետիսյանի գույները, ինչպես նաև զգալ աշնանային քամիների շունչն ու հզորությունը:
Իսկ նրանք, ովքեր չգիտեին հեծանիվ վարել, նշենք, որ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ակտիվ կերպով ունեցել ենք հեծանվավարության տեսա-գործնական դասընթացների շարք, որը շարունակվելու է մինչև հոկտեմբերի վերջ: Եթե դեռ կան մարդիկ, որ չգիտեն հեծանվել, դուք ունեք մեկ ամիս ժամանակ:
Հաջորդ միջոցառումների մասին տեղեկանալու համար հետևիր ծրագրի էջին և միացիր արշավներին:

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սեպտեմբեր ամսվա ընթացքումտեղի են ունեցել շարժունակությանտաս ծրագիր:

Դրանցից առաջինը «Youth work qith a difference» խորագիրը կրող միջազգային Էրազմուս+ դասընթացը երիտասարդական աշխատողների համար Մալթայում:

Հաջորդը Խորվաթիայի Օզալ քաղաքում տեղի ունեցած «Cultu(Ru)ral Challenge» խորագիրը կրող միջազգային Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիրն էր մշակութայինփոխանակման նպատակով:

Իտալիայի Տրամոնտի քաղաքում տեղի ունեցավ «Wild style: live outdoors, love outdoors» խորագիրը կրող միջազգային Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիրը:

Ուրախ ենք տեղեկացնելու, որ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում գործընկերության հաստատման հանդիպումը մեկնարկեց սեպտեմբերի 9-ին, որը տեղի է ունենում Ուկրաինայի Յանոշի քաղաքում:

Սեպտեմբերի 15-ից Վրաստան Քոբուլեթի քաղաքում մեկնարկել է «Conflict Resolution – Move Fast and Say Yes» խորագիրը կրող միջազգային դասընթացը կոնֆլիտկների կառավարման թեմայով:

Իսկ սեպտեմբերի 16-ից Խորվաթիայի Լասինյա քաղաքում մեկնարկեց «From Migration to Integration» խորագիրը կրող միջազգային երիտասարդական փոխանակման ծրագիրը:

Չեխիայի Բրնո քաղաքում սեպտեմբերի 22-ից տեղի ունեցավ փորձի փոխանակման աշխատանքային այց:

«Power to You(th)» խորագիրը կրող միջազգային դասընթացը սեպտեմբերի 22-ին մեկնարկել է Իռլանդիայի Գոլվեյ քաղաքում:

Սեպտեմբերի 22-ից «Fish or Fishing?» խորագրով միջազգային դասընթաց տեղի ունեցավ Վրաստանի Ախալցխա քաղաքում:

Եվ վերջին ծրագիրն էր սեպտեմբերի 23-ին Վրաստանի Քոբուլեթի քաղաքում մեկնարկած «Art of Conflict Management: Achieving Solutions for Life, Work and Beyond» խորագիրը կրող միջազգային դասընթացը:

Ինչպես նաև այս ամսվա ընթացքում ունեցել ենք երեք ծրագրի հնարավորություն Էրազմուս+ ծրագրի շրջանակներում:
Որոնցից մեկը միջազգային դասընթաց էր լուսանկարչության թեմայով Իտալիայում, մյուսը երիտասարդական աշխատանքի թեմայով միջազգային դասընթացն էր Սլովակիայում և վերջինը Վրաստանում միջազգային դասընթաց՝ կոնֆլիկտների կառավարման թեմայով:

"Teens4Change_Tavush" ԴԵՌԱՀԱՍՆԱԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ «UPSHIFT ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 14-ին "Teens4Change_Tavush" խորագիրը կրող ծրագրի մասնակիցները փորձի փոխանակման նպատակով հանդիպում ունեցան «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման ու զորակցման ծրագրի մասնակիցների հետ «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում:
Հանդիպման սկզբում «UPSHIFT Հայաստան» ծրագրի մասնակիցները կիսվեցին իրենց փորձով, պատմեցին համայնքային հիմնախնդիրներ լուծող ծրագրերի ընթացքի մասին, այնուհետև Տավուշի պատանիները ծանոթացան Հայաստանում առաջին բաց երիտասարդական կենտրոնի՝ «Երիտասարդների տան» գործունեությանն ու առօրյային, հետո շրջեցին քաղաքով ու տեսան «UPSHIFT Հայաստան» ծրագրի շրջանավարտների գրանցած արդյունքները:
"Teens4Change_Tavush" ծրագրի նպատակն է Տավուշի մարզում բնակվող 15-18 տարեկան մասնակիցներին տալ տեխնոլոգիաների ու ձեռարկատիրության մասին գիտելիք և հմտություններ, որոնց օգնությամբ վեր կհանվեն համայնքային խնդիրները և կառաջարկվեն դրանց համար տեխնոլոգիական բիզնես լուծումներ:
* "Teens4Change_Tavush" խրագիրն իրականացնում են Girls in Tech Armenia-ն և UNFPA-ը Տավուշի թեմի «Արևիկ» սոցիալ-կրթական կետրոնի հետ համագործակցությամբ:

ԵՆԿ-Ն 10 ՏԱՐԵԿԱՆ Է

Ուղիղ 10 տարի առաջ, սեպտեմբերի 22-ին, երիտասարդական աշխատանքի

բնագավառում փորձ ունեցող և այդ ոլորտում ճանաչված գյումրեցի մի խումբ երիտասարդների կողմից ստեղծված և շուրջ 9 ամիս գործունեություն ծավալած ոչ ֆորմալ նախաձեռնությունը՝ ԵՆԿ-ն ստացավ իրավաբանական կարգավիճակ՝ գրանցվելով որպես հասարակական կազմակերպություն:
Այս տարիների ընթացքում ԵՆԿ-ն հավատարիմ մնալով երիտասարդակենտրոն իր առաքելությանն ու նպատակներին՝ մշտապես ջանացել է նպաստել երիտասարդների ու պատանիների զարգացմանը, աջակցել է իրենց՝ որպես անհատ ու իրավագիտակից քաղաքացի կայացմանը:
Հավատացած ենք, որ դա մեզ հաջողվում է և շնորհակալ ենք երիտասարդներին վստահության համար: Հաջորդ տասնամյակում ևս մեծ պատրաստակամությամբ շարունակելու ենք պատվաբեր այս առաքելության իրականացումը:
Սրտանց շնորհավորում ենք ԵՆԿ թիմին, անդամներին ու բոլոր երիտասարդներին: Երախտապարտ ենք մեզ հետ այս ճանապարհին անցած բոլոր անձանց ու գործընկեր կառույցներին:
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ,
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ:

FOR YOUTH
WITH YOUTH
BY YOUTH

ՍԵՊՏԵՄԲԵՐԸ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆԸ»

Սեպտեմբեր ամիսը մեկնարկեց «Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի կայացում» ծրագրի «Բաց երիտասարդական աշխատանք» խորագիրը կրող դասընթացով, որին մասնակցում էին տարբեր քաղաքներից ժամանած ՀԿ ոլորտի ներկայացուցիչներ: Ծրագրի շրջանակներում կազմակերպվեց այց դեպի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, որտեղ մասնակիցները ծանոթացան կենտրոնի գործունեությանը և կենտրոնի պատանիների համար

անցկացրեցին մի շարք թեմատիկ աշխատարաններ: Ծրագրի մասնակից Վահե Խաչիկյանը, ով Վանաձորի «Ինֆոտան» համակարգողն է, կենտրոնին նվիրեց «Տիմագետ» խաղը:
Սեպտեմբերի 19-ին Գորկու այգում տեղի ունեցավ բացօթյա հավաքույթ կենտրոնի աշխատակիցների և երիտասարդների մասնակցությամբ, որտեղ անցկացվեցին թիմային աշխատանքի վարժություններ, քննարկումներ և ապահովվեց հաճելի միջավայր երիտասարդների համար:

Այս ամսվա ընթացքում տեղի ունեցած թեմատիկ շաբաթը նվիրված էր «Եվրոպական սպորտի շաբաթվան», որը լի էր սպորտային խաղերով, վիկտորինաներով և աշխատարաններով:
Ուրախ ենք մեր կենտրոնի սաների ձեռքբերումներով և նշենք, որ կենտրոնի սաներից Զարմուհի Պստեյանը, ով մի քանի ամիս առաջ մասնակցել էր «Առաջնորդության դպրոց» ծրագրին, կենտրոնի պատանիների համար իրականացրեց աշխատարան «Հաղորդակցում» թեմայով՝ խթանելով երիտասարդների մեջ ճիշտ և գրագետ հաղորդակցման հմտությունները:

ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԱՐՇԱՎ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆ» ՀԱՄԱՐ

Ուրախ ենք տեղեկացնել, որ մենք արդեն ունենք ավելի քան 1000 եվրոյի նվիրատվություն:
Մենք շարունակում ենք քրաուդֆանդինգի արշավը «Երիտասարդների տան» համար, որպեսզի ավելի մեծ թվով երիտասարդներ հնարավորություն ունենան հասնելու իրենց երազանքներին: Այդ ամենի համար անհրաժեշտ է լրացուցիչ 16 820 եվրո:
Եթե ցանկանում եք նվիրաբերել, անցնեք հղումով, ինչպես նաև օգնեք մեզ տարածել այն ձեր ընկերների շրջանում:

Տանկության դեպքում կարող եք նվիրաբերել նաև առձեռն կամ բանկային փոխանցմամբ՝ կապ հաստատելով՝
M: liana.hakobyan@yic.am
T: +37499426689